

բայրի Արծիւը թատերախաղէն, ու հօխացուածվ. Թէ քէի անի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծութեամբ և մեր շարականներու ու ժողովը ըստային երգերու շարքով մը:

Տրամախօսութեան զանազան պահերուն եւ լեկտրական լոյսերու չողարձակումով կը գուշակորուէր թեմին վրայ զետեղուած վարդանի մեծաղիր կենդանագիրը, այսպէս աւելի և շեշտելով տրամախօսութեան դպացումներուն զնացքը, որ արդէն իսկ բաւական յաջող խաղարկութեամբ մը իր մէջ առած էր բոլոր ներկաներուն լարուած ուշազգործիւնն ու ամբողջ ուշնուրուց:

Ուրախառիթ պարագայ մըն է մեզի համար տեսնել թէ ինչպէս երուսալէմի դիտակից Հայ հասարակութիւնը իր բոլոր խաւերով ու կարելի ճիզբով կուզայ բերելու խոր յարգանքի բաժինը վարդանանց սիրելի ու անմեռ յիշտակին, այսպէս բերելով նաև լաւագոյն ընդառաջումը մեր սիրեցեալ և վեհափառ Հայրապետի ու աղքասէր հոգիէն բղխող բարձր տնօրինութեան:

Ս. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻՑ

ԱՄՍՈՐԵԱՅ ԼԱԽԵՐ

* 4 Փետր. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն վերնատան մեր մատուրին մէջ: Պատարազին է Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանինեան:

* 5 Փետր. Բչ. — Յ. մ. ժամը 3 ին Հոգ. Տ. Տ. Հայրիկ վարդապետներ, ինչպէս նաև Տիար Կ. Հինգիւեան իսրայէլ մեկնեցան աթոռապատկան կալուածներու վերստացման զործով:

* 7 Փետր. Դչ. — Յ. մ. ժամը 3.30 ին տեղոյս բրիտանական ընդհանուր հիւպատոսը Sir Hugh Dow և երկու անզիւցի զրագէտներ Պրինք. Evelyn Waugh և Christopher Sykes և Պր. G. Taylor այցելեցին նախ Ս. Յակոբեանց Տաճար և առա հիւրասիրուեցան Պատրիարքարնի մեծ զահիննին մէջ, Գիր. Տեղապահ Հօր կողմէ:

* 11 Փետր. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Վարդարեան:

* 18 Փետր. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն վերնատան մեր մատրան մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

Առաւտեան ժամը 9 ին Հոգ. Տ. Տ. Հայրիկ վարդապետներ և Տիար Կ. Հինգիւեան Մայրավանք վերաբարձան իսրայէլն:

* 19 Փետր. Բչ. — Կ. ա. ժամը 10 ին տեղոյս Գելճիզայի ընդհանուր հիւպատոսը և նոր կարգուած իր փոխանորդը այցելեցին պատրի-

արքարան, ի բացակայութեան Գիր. Տեղապահ Հօր, Գիր. Տ. Սուրէն Վրդ. Ընդունեց զիրենք:

* 23 Փետր. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախազագանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

— Կէսօրուան ժամը 12 ին ի զիմաց Գիր. Տեղապահ Հօր Գիր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիւեանի վրխազարձ այցելութիւն տուաւ Գելճիզայի ընդհանուր հիւպատոսին:

* 24 Փետր. Շր. — Մրոյն Մարգի Զօտալարին. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Տաճարին Ա. Մարգսի հնագարեան մատրան մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Հայրիկուն Վրդ. Արքանամեան: Յիտ Ու. Պատարազի կատարուեցաւ հանգիստը Հոգենանցութեան պաշտօն Ս. Արտոյ բարեւար Վանի. Պալուս Պէյ կիլիկիեանի ծննդաց Մարգսի և Տիարուն հոգիներուն ի հանցիս:

— Յ. մ. ժամը 4 ին Գիր. Տ. Ս. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիւեանի ներկայ գոնուեցաւ հրածեշտի թէյտանցանի մը: արուած Ամերիկեան հիւպատոսարանին կողմէ, Ամերիկեան ընդհանուր հիւպատոսին և իր տիկնոջ մեկնումի առիթով, Յ. Մ. Ս. Ա. ի սրանին մէջ:

* 25 Փետր. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Պատարազին էր Հոգ. Տ. Վարզեկ Վրդ. Վրդանէսեան:

* 26 Փետր. Բչ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան Տեղանընդառաջի տօնին նախատօնակը և Տեղանընդառաջանի երեկոյեան հանգիստիւնը կատարուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախազանընթեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի: Իսկ զիւերակիզիրին կատարուեցաւ Եկեղեցի և Հակման արարութիւն: Ըստ հնամենի Հայրական սովորութեան երեկոյեան ժամերգութիւններու յիտոյ վանքի բոլոր թաղերուն մէջ էր վառէին խարոյիներ, որոնց շարոջ մոլովուրզը սարքած էր խրախնահական տեսարաններ:

* 27 Փետր. Դչ. — Տեղանընդառաջ. — Հանգիստը Ո. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Տաճարին մէջ: Պատարազից երարդոց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

— Յ. մ. ժամը 5 ին Ամերիկեան ընդհ. հիւպատոսը M. Gibson իր հետեւ որդիներով հրածեշտի այցելութիւն տուաւ պատրիարքարեան և ընդունուեցաւ Գիր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի կողմէ:

* 28 Փետր. Դչ. — Ի զիմաց Գիր. Տեղապահ Հօր Գիր. Տ. Ս. Սուրէն Վրդ. Քէմհանեան Հօր Գիր. Տ. Ս. Սուրէն Վրդ. Քէմհանեան ընկերակցութիւնը Տիար Կ. Հինգիւեանի այցելեց Երուսալէմի Տարէկէլ-Շէրիֆի պահապան և Սուրը Տեղանընդառաջը բարձր վերահսկիչ Վանի. Բաղըզ Փաշա Հայաշիպիի իր հիւպատոսին առթիւ, Համբարձման Օկոստա Վիքթորիա հիւպատոսը մէջ և բարեմաղթութիւններ ըրաւ իր շուտափոյթ ապաքինման համար:

* 4 Մարտ Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարին վերնատան մեր մասունքն մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարզել Վ. Վ. Վարդանէսեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյն Միաբաններէն Տ. Յովհաննէս Վ. Վ. Լիթէքնեանի տարելիցին առթիւ: ապա Միաբանութիւնը իր չիրմին վրայ կատարեց Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն:

* 5 Մարտ ԲՀ. — Առաւոտեան Գալանտիայէն օգանաւով Պարսկաստան մեկնեցաւ իրրե Ս. Աթոռոյնուիրակ Հոգ. Տ. Հայրիկ Վ. Վ. Առաւոտեանը:

* 7 Մարտ ԴՀ. — Կէսօրէ վերջ ժամը 4.30ին Գիր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Տիար է. Հինգիւեանի այցելեց Վ. Առաջ Փաշանաշաշչիոցի իր հիւանդութեան առթիւ: Համբարձման Ներան Ոկոսուա Վիթթօրիսա հիւանդանոցին մէջ:

* 9 Մարտ Ուրբ. — Իրաւական սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Քաղաքիս Առարկուներու Ս. Մարկոս Եկեղեցւոյն մէջ: Պատարացեց և քարոզեց Հոգ. Տ. Առողիկ Վ. Վ. Ղազարեան: Յետ Ս. Պատարագի վարդապետ Հայրեր պատուամիրուեցան Ասորոց Տեսչէն իրենց Տիառաբաննին մէջ: Արարողութեանց իր նախագահէր Հոգ. Տ. Առուրէն Վ. Վ. Քէմհանեան:

— Յ. Ֆ. Հոգ. Տ. Միւռոն Վ. Վ. Կըրիմիկեան որ արձակուրզով մեկնած էր Կ. Պոլիս վերադարձաւ Ս. Աթոռ:

* 10 Մարտ Եր. — Բատ աւանդական կարգին Մեծ Պահոց երեկոյեան ժամերգութեան ընթացքին Գիր. Տեղապահ Հօր և Հոգ. Վարդապետներու մասնակցութեամբ փակուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի բոլոր խորանները և դիմաւոր որբանկարները վարագոյներով:

ԵԹՈՒՊՈԽ ԳԱՀԱՃԱՌԱՆԳ ԽՆԱՌԱՆԻ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՑԱՐ

ՈՒԽՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

17 Փետր. Շարաթ առաւօտեան ժամը 8-ին Եթովպիոյ Գահաճառակամ որ ուխտաւորաբար եկած էր Երուսաղէմ — իր ուխտի այցելութիւնը տուաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Գողոթայի Խաչելութեան տեղուոյն:

Երուսաղէմի մէջ չափէշ համայնքը հինէն իմեր ծանացուած է — ինչպէս նաև Ղափի եւ Ասորի համայնքներ — իրեւ Երուսաղէմի չայց Պատրիարքութիւն հետեւողութիւնը ու Ս. Տեղեաց իրաւակարգին մէջ ենթարկուած են մեր Պատրիարքաբանի վերին հսկողութեան:

Հետևարար ի Ս. Յարութիւն Գահաճառանգին միջունելութեան արարագութիւնը կատարուեցաւ

տեղուոյն մեր Հոգեշնորհ Տիսչին կողմանէ, մասնակցութեամբ Հոգ. Տ. Առողիկ Վ. Վ. իւ Հոգ. Տ. Մաշտոց Արքայի եւ տեղուոյն բարեշնորհ ուրարակիր Միաբաններուն: Խոկ ի դիմաց Գիր. Տեղապահ Հօր ներկայ էր Գիր. Տ. Սուրէն Վ. Վ. Քէմհանեան:

Պամի. Գահաճառակամ իր հասաւ Տաճարին դուքը ողջունուեցաւ մեր. Յունաց եւ Լատինաց Հոգ. Տիսչուններէն ու առաջնորդուեցաւ Պատանատեղուոյն Երկրապահութեան՝ ուր կը սպասէին մեր զոյլ ուրարակիր մուսականներն ու լուսարարը վարդիչուր ի ծեռին: Ապա Վ. Վ. Վ. Հիւր առաջնորդուեցաւ Ս. Գերեզման ու Գողոթայի: Ուր կատարելէ յետոյ իր ուխտու Քրիստոնեայ թագաւորագունի մը խոր Երկիւլազութեամբ, հրաժեշտ առաւ զոհունակ արտայայտութեամբ իրեն ընծայուած պատուոյ այս ընդունելութեան համար:

ՏՈՔՔ. ՂԱԶԱՐՈՍ ՏԵՄԻՐՃԵԱՆ

Խոր վիշտ պատճառեց Ս. Յակոբեանց բովանդակական Միաբանութեան եւ զինքը ճանչցոյ ու սիրող բարեկամներուն մահը այս պատուական ազգայինին որ տեղի ունեցաւ 22 Փետրուարին Եաֆայի մէջ:

Տոքք. Տէմիրճեան իր անթեր, ուղիղ եւ ազնիւական նկարագրով ու պատրաստակամ ողիով ծանօթ էր ոչ միայն Հայ շրջանակներուն այլ նոյն խոկ օտարներուն, որոնց բոլորին սէրն ու յարգանքը կը վայելէր հաւասարապէս: Ան Պահեստինի դէպրերու թերումով ստեղծուած դժուարին օրերուն տնասկ մը պատուոյ Ներկայացուցիչը եղաւ Եաֆայի Հայ զաղութին եւ օժանդակը տեղուոյն Հոգ. Հովիւ ու Ս. Աթոռոյ Ներկայացուցիչ Հոգ. Տ. Բարդէն Վ. Վ. Ապատեանին: Որ յաւերծ ողբալի Տօքքորին մահով կը կարսնցնէ անծոնէր զօրծակից մը եւ հաւատաբիմ բարեկամ մը:

Գիր. Տեղապահ Հօր մասնաւոր կարգադրութեամբ, ի դիմաց Ս. Աթոռուն Հոգ. Տ. Յարութիւն Վ. Վ. Մաշտոց Արքայի համար կանուեցաւ իր թաղման արարագութեան որ կատարուեցաւ Յովապէի Ս. Նիկոլայոս Եկեղեցւոյն մէջ ու մարմինը ամփոփուեցաւ տեղուոյն վանապատկան Երեկզմանատան մէջ: Այս առթիւ Ս. Աթոռոյ կողմէն մասնաւոր ծաղկեպասակ զեաեղուեցաւ հանգուցալի թագաղին վրայ:

Երկնային հանգիստ իր հոգիին ու Ս. Հոգևոյն միխթարութիւն իր սպաւոր տիկնոց, անչափահա փորբերուն եւ բոլոր պարագաներուն: